ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՏԻԿԻՆ Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Առաքելյան.

Ի պատասխան Ձեր 21.01.2019թ. հ.01/36Մ գրության՝ տեղեկացվում է.

Երևանի Ավան վարչական շրջանում տեղաբաշխված՝ Խուդյակովի փողոցը նախկինում սպասարկող միկրոավտոբուսային հ.61 երթուղին, տարիներ առաջ փակվել է երթուղու շահագործման ցածր արդյունավետության պատճառով: Խուդյակովի փողոցի տրանսպորտային կապը մայրաքաղաքի կենտրոնի հետ ապահովելու նպատակով կազմակերպվել էր միկրոավտոբուսային հ.77 նոր երթուղին, սակայն նշված փողոցում կայուն ուղևորահոսքի բացակայության և, որպես հետևանք, երթուղու շահագործման ցածր արդյունավետության պատճառով, տվյալ երթուղին ևս փակվել է, իսկ նոր երթուղի կազմակերպելու հնարավորություն ներկայումս չկա:

Խուդյակովի փողոցի տրանսպորտային սպասարկման հարցը, ընդհանուր առմամբ, կքննարկվի Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի մշակման և ներդրման գործընթացի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ